ԱՐԴ/0054/15/24

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Արմավիրի մարզի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Մ.Կիրակոսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

17 ապրիլի 2026 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով [redacted] գույքի արգելադրման վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Լ.Գրիգորյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

# ՊԱՐԶԵՑ

**<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>**

1. 2023 թվականի հոկտեմբերի 20-ին, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչությունում, նախաձեռնվել է թիվ [redacted] քրեական վարույթը՝ 1961 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածի 3-րդ մասի, 213-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի պաշտոնակատար Վ.Պողոսյանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ թիվ [redacted] քրեական վարույթը փոխանցվել է ՀՀ քննչական կոմիտե:

Նախաքննության մարմինը 2024 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ, [redacted] տարածքի [redacted] ամբողջ անշարժ գույքի նկատմամբ կիրառել է արգելադրում:

2024 թվականի ապրիլի 25-ին, նախաքննության մարմինը վերոնշյալ որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդությամբ դիմել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդության հիման վրա սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթի հարուցումը մերժվել է:

3. Դատախազի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2024 թվականի հունիսի 25-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու,

Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 26-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Լ.Գրիգորյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ ու սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

**<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ, 132-րդ և 295-րդ հոդվածները՝ այդ կերպ սահմանափակելով [redacted] տարածքի [redacted] ամբողջ անշարժ գույքի արգելադրումը:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոք բերած անձը, մեկնաբանելով գույքի արգելադրումը կանոնակարգող դրույթները, արձանագրել է, որ սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման դատական վարույթ հարուցելու համար համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու որոշումը միջնորդությանը կցելու պահանջը չունի համապարտադիր բնույթ, և դրա անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե գույքի արգելադրումն օրենքով նախատեսված որ հիմքով է կատարվել:

Բողոքաբերի պնդմամբ, բոլոր այն դեպքերում, երբ միջնորդությունը ներկայացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերի հիմքով, ապա քրեական հետապնդում հարուցված լինելու և նման որոշում ներկայացնելու պարտադիր պահանջ օրենսդիրը չի սահմանել:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությանն առ այն, որ նախաքննության մարմնի միջնորդությունը հղում չի պարունակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, արձանագրել է, որ հիշյալ միջնորդությունը ներկայացվել է հենց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով, ինչը պարզ է առնվազն միջնորդության բովանդակությունից:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի հունիսի 25-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ:

**<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>**

7. Գույքն արգելադրելու մասին որոշմամբ նախաքննության մարմինն արձանագրել է, որ. *«(...)* [redacted]

[redacted]

*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝*

*«1. Գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար:*

*2. Գույքը կարող է արգելադրվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.*

*1) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտն է կամ այլ տեսակի օգուտ. (...)»:*

*Նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը (...)»:*

*(...) [Վ]արույթն իրականացնող մարմինը հանգում է հիմնավոր հետևության առ այն, որ* [redacted]

[redacted] *պայմանող* [redacted] *ամբողջ անշարժ գույքը փոխանցվել է հանցագործության կայարման եղանակով, ուստի անհրաժեշտ է* [redacted] *կարածքը և* [redacted] *ամբողջ անշարժ գույքի վրա դնել արգելանք (...)»*[1]:

8. Գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը ստուգելու վարույթ չհարուցելու վերաբերյալ դիրքորոշումն Առաջին ատյանի դատարանը պատճառաբանել է հետևյալ կերպ. *«(...) Գույքի արգելադրման կառուցակարգը սահմանող՝ վերոշարադրյալ իրավադրույթներից հետևում է, որ գույքի արգելադրումը կարող է կիրառվել բացառապես, ի թիվս այլ պայմանների, նաև քրեական հետապնդում հարուցված, ուստի և վարույթով մեղադրյալի դատավարական կարգավիճակով անձ ներգրավված լինելու դեպքում: Դատարանի գնահատմամբ դա թելադրված է այն հիմնարար գաղափարով, որ գույքի արգելադրման նպատակը ենթադրյալ հանցագործությամբ պատճառված*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 171-187:

հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հայտնությունը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելն է: Ընդ որում, նշվածից հետևում է, որ այդ նպատակներն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ:

Այնուամենայնիվ՝ այդ նպատակները չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ գույքի արգելադրման համար բավարար լինի ընդամենը դրանց վկայակոչումը կամ վերարտադրումը: Այսինքն՝ կանխատեսվող գործողությունները պետք է հիմնավորվեն փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ: Հետևաբար՝ եթե քրեական հետապնդում հարուցելու համար անհրաժեշտ ապացուցողական շեմը հաղթահարված չէ, այսինքն՝ բացակայում է կոնկրետ անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստեր, ինչն արդեն իսկ բավարար է քրեական վարույթում մեղադրյալ ունենալու համար, ապա չի կարող հաղթահարված լինել նաև գույքի արգելադրման՝ այս կամ այն հիմքը հաստատելու համար անհրաժեշտ ապացուցման շեմը՝ ապացույցների գերակշռությունը և ողջամիտ ենթադրությունը: Այլ կերպ՝ քրեական հետապնդում հարուցված լինելու փաստը կանխատեսելի է դարձնում արգելադրված գույքի ճակատագիրը, հակառակ մեկնաբանության պայմաններում գույքի արգելադրման նպատակն ու հիմքերը կիսեղաթյուրվեն:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ քրեական հետապնդման առավելագույն ժամկետի լրացած լինելն ու այդ ժամկետի ընթացքում վարույթի նյութերը դատախազի կողմից դատարանին հանձնված չլինելը քրեական հետապնդումը բացառող հանգամանք է: Նշվածից հետևում է, որ հարուցված քրեական հետապնդման, այսինքն՝ մեղադրյալի կարգավիճակի համար օրենսդիրը սահմանել է ժամկետային սահմանափակումներ, ինչն անձի համար երաշխիք է, որ մինչդատական վարույթում նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումն անողջամիտ երկար կամ հավերժ չի տևի: Իսկ այն դեպքում, երբ քրեական հետապնդում հարուցված չէ, տվյալ վարույթի ընթացքն ու բովանդակությունը կարող է դառնալ անկանխատեսելի, ուստի և այդ վարույթով արգելադրված գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու՝ անձի իրավունքն իր հերթին կարող է սահմանափակվել անողջամիտ ժամկետով, ինչը բնականաբար չի

*բիի ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջներից, ավելին՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ սեփականության իրավունքը կկրի վերացական և պատրանքային բնույթ:*

*(...)*

*Վերը նշվածի համապատասխանությամբ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության քննիչ Մհեր Բաբայանի կողմից ներկայացված միջնորդությունը և կից նյութերը, Դատարանն արձանագրում է, որ առկա չէ համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում, մինչդեռ, վարույթ հարուցելը անվերապահ մերժվում է, եթե համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը կցված չէ:*

*Հետևաբար, նշվածով պայմանավորված, Դատարանն արձանագրում է, որ միջնորդությունը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 3-րդ մասով ներկայացված պահանջին, այլ կերպ, Դատարանն փաստում է, որ տվյալ դեպքում չի պահպանված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 3-րդ մասի պայմանը, ինչն էլ իր հերթին անվերապահ հիմք է վարույթ հարուցելը մերժելու համար (...)»[2]:*

9. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման է ենթարկել գործի փաստական հանգամանքները, որի արդյունքում արձանագրելով, որ առկա չէ համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում, այսինքն պահպանված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, ներկայացված միջնորդության հիմքերի սահմաններում իրավաչափ որոշում է կայացրել*

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 190-195:

*սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական ստուգման վարույթի հարուցումը մերժելու մասին:*

*Ինչ վերաբերում է հատուկ վերանայման բողոքի այն պնդմանը, թե՝ «(...) քննիչի միջնորդությունը ներկայացված է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմնավորմամբ (...) և այդ հիմքով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույք», ապա այն չի բխում «Գույքն արգելադրելու մասին որոշումը դատարանի հաստատմանը ներկայացնելու մասին» քննիչի 25.04.2024թ. միջնորդությունից, որը հղում չի պարունակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին:*

*(...)*

*Այսինքն, նախորդ միջնորդության հիման վրա վարույթ հարուցելը մերժելու մասին որոշում կայացնելուց հետո,* [redacted] *ծանոթացնելով «Գույքն արգելադրելու մասին» որոշման հետ, արձանագրելով, որ քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում դեռևս չի կայացվել, առանց հղում անելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքի վրա՝ քննիչը գույքն արգելադրելու մասին որոշումը դատարանի հաստատմանը ներկայացնելու մասին նոր միջնորդություն է ներկայացրել, որի հիման վրա վարույթի հարուցումն իրավաչափ կերպով մերժվել է դատարանի կողմից:*

*Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթ հարուցելը մերժելու մասին» Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 23.04.2024թ. որոշման կայացումից հետո շահագրգիռ կողմը ոչ թե վերադաս դատական ատյան է դիմել այդ որոշման հիմքում դրված պատճառաբանությունները (այդ թվում՝ համապատասխան անձի (անձանց) նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման (որոշումների) պատճեն(ներ)ը միջնորդությանը կցված չլինելը, անընդունելի համարելու հիմքով, այլ նոր միջնորդություն է ներկայացրել դատարան՝ առանց այդ հարցին պատշաճ անդրադարձ կատարելու:*

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը Արմավիրի մարզի դատախազի տեղակալ Մ. Եսայանի բողոքի կապակցությամբ վարույթի հարուցումը մերժելով՝ չի խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավադրույթները (...)»*[3]:

**<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

11. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը հաստատելու՝ նախաքննության մարմնի միջնորդությանը համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը կցված չլինելու հիմքով սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթ հարուցելը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հարուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար:*

*2. Գույքը կարող է արգելադրվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.*

*1) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտն է կամ այլ տեսակի օգուտ.*

*2) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց.*

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 79-100:

*3) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելուն ուղղված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ.*

*4) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ, 292-րդ, 340-րդ կամ 399-րդ հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկա է.*

*5) առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ ապառվել:*

*3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված գույքի բացակայության դեպքում կարող է արգելադրվել դրան համարժեք գույք:*

Նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը, իսկ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրվել կարող է մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը, ներառյալ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ անկախ գույքի տեսակից և այն տիրապետողից: Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապատասխան բաժինը»:*

Նույն օրենսգրքի 133-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախաքննության ընթացքում գույքն արգելադրվում է քննիչի որոշման հիման վրա: Այդ որոշումը և այն հիմնավորող նյութերը եռօրյա ժամկետում ներկայացվում են իրավասու դատարանի հաստատմանը: (...):*

*(...)*

*3. Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերի առերևույթ առկայության դեպքում քննիչը համապատասխան գույքի արգելադրումն իրականացնում է անհապաղ»:*

13. Քրեական վարույթի շրջանակում գույքի արգելադրումը կանոնակարգող՝ վերը մեջբերված նորմերի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը, նախ, կրկնում է, որ օրենսդրորեն տարբերակված են գույքի արգելադրման հիմքերն ու դրանց առկայության ապացուցման շեմերը[4]:

Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերի վերլուծությունից բխում է, որ դրանք նախատեսում են այն գույքի արգելադրման օրենսդրական հնարավորությունը, որը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ հանցանքի կատարման գործիք կամ միջոց է ծառայել: Ընդ որում, նշված հիմքերից որևէ մեկով գույքն արգելադրելու համար օրենսդիրը նախատեսել է համապատասխան հիմքի առկայության ապացուցման բարձր, այն է՝ ապացույցների գերակշռության շեմ, որը ենթադրում է, որ քննիչը պետք է ներկայացնի ծանրակշիռ փաստական տվյալների ամբողջություն՝ գույքի՝ հանցավոր ճանապարհով ստացված, կամ հանցանքի կատարման գործիք, կամ միջոց լինելը հիմավորելու համար: Ի տարբերություն գույքն օտարելու, թաքցնելու, վնասելու, ոչնչացնելու կամ սպառելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով գույքի արգելադրմանը, երբ համապատասխան հիմքի առկայությունը փաստելու համար բավարար է ողջամիտ ենթադրության շեմը, նախորդ խումբ հիմքերի համար ապացուցման ավելի բարձր շեմ նախատեսելն իրավաչափորեն բխում է այն հանգամանքից, որ այդ հիմքերով կարող է արգելադրվել **ցանկացած անձի գույք**՝ անկախ այդ անձի՝ որևէ, այդ թվում՝ մեղադրյալի քրեադատավարական կարգավիճակ ունենալու կամ չունենալու կամ առհասարակ քրեական վարույթով որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերով գույքն արգելադրելու պարագայում օրենսդիրը նախատեսել է հարկադրանքի այս միջոցն

---

[4] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ 2025 փետրվարի 24-ի թիվ ՀԿԴ/0039/15/24 որոշումը և *«ՎԱՎ ԱՎՏՈ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքի արգելադրման* վերաբերյալ գործով 2025 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ ԵԴ1/0342/15/23 որոշման 11-12.3-րդ կետերը:

**անհապաղ** կիրառելու պահանջ: Այլ կերպ՝ նշված հիմքերով գույքը կարող է արգելադրվել յուրաքանչյուր դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնին հաջողվել է ապացույցների գերակշռությամբ հիմնավորել, որ հայտնաբերված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ հանցանքի կատարման գործիք կամ միջոց է ծառայել: Այսինքն՝ նշված հիմքերով գույքի արգելադրման պարագայում քննիչը պետք է հիմնավորի **արգելադրման ենթակա գույքի և ենթադրյալ հանցանքի միջև կապը**՝ անկախ հանցանք կատարած անձի հայտնի լինելու կամ չլինելու կամ հայտնի լինելու պարագայում վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու բավարար փաստերի բացակայության հանգամանքից: Քննարկվող հիմքերից որևէ մեկով գույքի արգելադրման անհրաժեշտությունը հիմնավորող փաստերը կարող են ի հայտ գալ ավելի վաղ, քան օբյեկտիվորեն հնարավոր կլինի հայտնաբերել ենթադրյալ հանցանք կատարած անձին կամ վերջինիս նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցել: Նման դեպքերում գույքի արգելադրումը ժամանակային առումով քրեական վարույթով որևէ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված լինելու հանգամանքով պայմանավորելն անհամատեղելի կլինի անհապաղության օրենսդրական պահանջի հետ[5]:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթը հարուցվում է գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու՝ քննիչի միջնորդության հիման վրա, որը դատարան է ներկայացվում համապատասխան գույքն արգելադրելուց հետո՝ եռօրյա ժամկետում:*

*(...)*

*3. Միջնորդությանը կցվում են քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրության, համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման (...) պատճեն[ը]»:*

15. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդությանը կցելու պահանջը պետք

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ ԵԴ1/0042/15/23 և 2026 թվականի մարտի 27-ի թիվ ԵԴ1/0379/15/24 որոշումները:

է գնահատվի գույքի արգելադրման հիմքերի վերոնշյալ առանձնահատուկ կարգավորումների հետ համակցության մեջ, քանի որ քննիչի կողմից այս պահանջը պահպանված լինելու հարցի լուծումը կապված է գույքն արգելադրելու կոնկրետ հիմքի կամ հիմքերի հետ: Այսպես, ընդհանուր կանոնի համաձայն՝ համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու պարագայում, քննիչի՝ գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդությանը պետք է կցվի քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը: Այնուամենայնիվ, այն իրավիճակներում, երբ քննիչն օբյեկտիվորեն զրկված է վարույթի տվյալ փուլում որևէ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու հնարավորությունից, սակայն ապացույցների գերակշռությամբ հիմնավորել է հայտնաբերված գույքի՝ հանցավոր ճանապարհով ստացված կամ հանցագործության գործիք կամ միջոց լինելը, այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությունը, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հատուցման կամ հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար իրավասու է գույքն արգելադրելու մասին որոշում կայացնել և այդ որոշման իրավաչափությունը հաստատելու մասին միջնորդություն ներկայացնել դատարան: Նշված իրավիճակում քննիչի՝ գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդությանը որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու մասին որոշում կցված չլինելը սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթի հարուցումը մերժելու հիմք չէ: Նման իրավիճակում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, դատարանը պետք է սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական ստուգման վարույթ հարուցելու որոշում կայացնի և հարուցված վարույթի շրջանակներում գնահատի գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը՝ համապատասխան հիմքերի առկայության տեսանկյունից[6]:

16. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

---

[6] Տե՛ս նույն տեղում:

- Անձի կամ նրա մերձավորների նկատմամբ բռնություն գործադրելով, առանձնապես խոշոր չափերի գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու պահանջ ներկայացնելու (շորթում), ինչպես նաև մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող ակնհայտ կեղծ փաստաթուղթ կեղծելու՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու վերաբերյալ հաղորդման հիման վրա նախաձեռնված վարույթով քննիչը որոշում է կայացրել արգելադրել [redacted] տարածքը և [redacted] ամբողջ անշարժ գույքն այն հիմնավորմամբ, որ դրանք [redacted] են փոխանցվել ենթադրյալ հանցագործության կատարման արդյունքում[7]:

- Վերոնշյալ որոշման իրավաչափությունը հաստատելու քննիչի միջնորդության հիման վրա համապատասխան վարույթի հարուցումն Առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է՝ այն պատճառաբանությամբ, որ ներկայացված միջնորդությանը կցված չէ համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը, ինչը, սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման դատական երաշխիքների վարույթով ներկայացվող միջնորդությանը կցվող պարտադիր փաստաթղթերից է: Առաջին ատյանի դատարանը նաև արձանագրել է, որ երբ քրեական հետապնդում հարուցված չէ, տվյալ վարույթի ընթացքն ու բովանդակությունը կարող է դառնալ անկանխատեսելի, ուստի և այդ վարույթով արգելադրված գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու՝ անձի իրավունքն իր հերթին կարող է սահմանափակվել անողջամիտ ժամկետով և սեփականության իրավունքը կկրի վերացական և պատրանքային բնույթ[8]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

- Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ըստ էության ամբողջությամբ համաձայնել է Առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններին: Վերաքննիչ դատարանը նաև արձանագրել է, որ «Գույքն արգելադրելու մասին որոշումը դատարանի հաստատմանը ներկայացնելու մասին» քննիչի՝ 2024 թվականի ապրիլի 25-ի միջնորդությունից չի բխում, որ այն ներկայացված է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմնավորմամբ, քանի որ նշված նորմին հղում չի պարունակում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ «Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթ հարուցելը մերժելու մասին» Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 23-ի որոշման կայացումից հետո, շահագրգիռ կողմը ոչ թե վերադաս դատական ատյան է դիմել՝ այդ որոշման հիմքում դրված պատճառաբանությունները (այդ թվում՝ համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը միջնորդությանը կցված չլինելը) անընդունելի համարելու հիմքով, այլ նոր միջնորդություն է ներկայացրել դատարան՝ առանց այդ հարցին պատշաճ անդրադարձ կատարելու[9]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը քննիչի՝ գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը ստուգելու միջնորդությանը կցված չլինելու հիմքով սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթ հարուցելը մերժելու մասին որոշում կայացնելով, երբ տվյալ վարույթով որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված չի եղել, իսկ Վերաքննիչ դատարանն այն անփոփոխ թողնելով, սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքների վարույթի վերաբերելի կարգավորումները չեն դիտարկել գույքի արգելադրման հիմքերի ու արգելադրման ենթակա գույքի շրջանակի վերաբերյալ քրեադատավարական

---

[9] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

նորմերի հետ համակցության մեջ: Մասնավորապես, ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել այն հանգամանքը, որ կոնկրետ [redacted] տարածքը և [redacted] ամբողջ անշարժ գույքն արգելադրվել են այն հիմքով, որ ապացույցների գերակշռությամբ հիմնավորվել է, որ դրանք [redacted] են փոխանցվել ենթադրյալ հանցագործության արդյունքում, ինչը թույլ է տալիս արգելադրել ցանկացած անձի գույք՝ հիմնավորելով այդ գույքի և ենթադրյալ հանցանքի միջև կապը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ «Գույքն արգելադրելու մասին որոշումը դատարանի հաստատմանը ներկայացնելու մասին» նախաքննության մարմնի միջնորդությունից չի բխում, որ այն ներկայացված է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմնավորմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի՝ գույքն արգելադրելու մասին որոշումն ուղղակիորեն հղում է պարունակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին[10]: Բացի այդ, դա ակնհայտ է նաև միջնորդության բովանդակությունից[11], հետևաբար, Վերաքննիչ դատարանի այդ դատողությունն անհիմն է:

18. Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն մեկնաբանությանը, որ համապատասխան միջնորդությանը հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը կցելու պահանջի նպատակը՝ մինչդատական վարույթում գույքի արգելադրման տևողությունը հանրային քրեական հետապնդման ժամկետներով որոշակիացնելն է, ապա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ օրենսդիրը նախատեսել է գույքի արգելադրման իրավաչափությունը վերանայելու հնարավորություն՝ սահմանելով, որ մինչդատական վարույթի ընթացքում շահագրգիռ անձն իրավունք ունի միջնորդություն ներկայացնել դատարան՝ գույքի

---

[10] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 19:

արգելադրումը վերացնելու պահանջով՝ այն պայմանով, որ միջնորդությունը պետք է ներկայացվի գույքի արգելադրումից ոչ շուտ, քան երեք ամիս հետո և դրանում անհրաժեշտ է շարադրել գույքի արգելադրման իրավաչափությունը վիճարկող նոր էական փաստարկներ: Քրեադատավարական այս մեխանիզմը հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, առանց մինչդատական վարույթն իրականացնող մարմնին դիմելու, անմիջականորեն դատարան ներկայացնել այն փաստերը և փաստարկները, որոնք ի հայտ են եկել գույքի արգելադրումից հետո և ազդել են գույքի արգելադրման իրավաչափության վրա: Օրենսդիրը նաև շահագրգիռ անձին հնարավորություն է տվել նախքան եռամսյա ժամկետի լրանալը գույքն արգելանքից ազատելու միջնորդություն ներկայացնել վարույթն իրականացնող մարմնին: Եվ ի վերջո, անկախ համապատասխան միջնորդություն ներկայացնելուց՝ հսկող դատախազի հաստատմամբ՝ քննիչի, կամ դատարանի որոշմամբ գույքը ևս կարող է հանվել արգելանքից, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են գույքի արգելադրումը վերացնելու անհրաժեշտության մասին[12]:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 7-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթի հարուցումը հիմնավորված մերժվում է, եթե պահպանված չեն միջնորդության ներկայացման ընթացակարգի, դրա բովանդակության կամ դրան կցվող դատավարական նյութերի վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պայմանները: Միաժամանակ, օրենսդրորեն ամրագրվել է դատական վարույթի հարուցումը մերժվելու դեպքում նոր միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը: Նկատի ունենալով, որ վարույթի հարուցման մերժումը պետք է լինի հիմնավորված, այսինքն, դատարանն իր որոշման մեջ պետք է հստակ նշի այն պայմանը, որին չի համապատասխանում ներկայացված միջնորդությունը, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ **նույն միջնորդությունը կրկին ներկայացնելու օրենսդրական հնարավորությունը կարող է գործադրվել միայն դատարանի արձանագրած ձևական սխալը շտկելուց հետո,** ինչը բացառում է նույն միջնորդությունը կրկին ներկայացնելու և դրա կապակցությամբ

[12] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ ԵԴ1/0042/15/23 որոշման 19.1-րդ կետը:

դատարանի կողմից տարբերվող որոշում կայացնելու ակնկալիքով այդ ընթացակարգն օգտագործելու հնարավորությունը: Հետևաբար, դատական վարույթի հարուցումը մերժելու հիմքում դրված պատճառաբանության հետ անհամաձայնությունը պետք է բարձրացվի վերադաս դատարանի առջև՝ դատական ակտի՝ վերադաս դատարան բողոքարկելու ընթացակարգով, այլ ոչ թե նույն միջնորդությունը կրկին ներկայացնելու միջոցով[13]:

Անդրադառնալով սույն վարույթի փաստական հանգամանքներին, հարկ է նկատել, որ նախաքննության մարմինը գույքն արգելադրելու մասին որոշումը դատարանի հաստատմանը ներկայացնելու մասին միջնորդության մեջ նշել է, որ 2024 թվականի ապրիլի 22-ին գույքն արգելադրելու մասին որոշումը դատարանի հաստատմանը ներկայացնելու մասին միջնորդություն է ներկայացվել, որի վերաբերյալ իրավասու դատարանի կողմից վարույթ չհարուցելու մասին որոշում է կայացվել այն պատճառաբանությամբ, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խախտումներ. մասնավորապես, միջնորդությանը կցված չեն համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը, ինչպես նաև գույքի սեփականատիրոջը կամ դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձի միջնորդության պատճենն ուղարկած լինելը հավաստող փաստաթուղթը: Վերոգրյալի հիման վրա, 2024 թվականի ապրիլի 23-ին գույքն արգելադրելու մասին որոշմանը [redacted] ծանոթացվել են, ինչպես նաև նշվել է, որ քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում դեռևս չի կայացվել[14]: Այնուհետև, 2024 թվականի ապրիլի 25-ին, կրկին ներկայացվել է համապատասխան միջնորդություն:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինը, դատարանի կողմից արձանագրված թերություններից

---

[13] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«ՎԱՎ ԱՎՏՈ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքի արգելադրման* վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ԵԴ1/0328/15/23 որոշման 19-րդ կետը:

[14] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 19:

մեկը շտկելով, գործադրել է միջնորդությունը կրկին ներկայացնելու օրենսդրական հնարավորությունը, միաժամանակ արձանագրելով, որ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում դեռևս չի կայացվել: Ուստի Վերաքննիչ դատարանի դատողությունն այս մասով ևս անհիմն է:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ գույքն արգելադրելու մասին որոշման իրավաչափությունը հաստատելու՝ նախաքննության մարմնի միջնորդությանն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը կցված չլինելու հիմքով սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթ հարուցելը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումներն իրավաչափ չեն:

21. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը՝ դատական ակտ կայացնելիս, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված՝ հանրայնության սկզբունքի խախտման, ինչն ազդել է վարույթի ելքի վրա, հետևաբար՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և վարույթն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության փոխանցելու համար[15]:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում, Առաջին ատյանի դատարանը նախաքննության մարմնի միջնորդության կապակցությամբ պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ,

---

[15] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ավաթ Ամինիի* գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումը:

264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 26-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 25-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ